ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ՀԱՏՈՐ VI)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2006

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

ՀՏԴ 94/99
ԳՄԴ 63.3
Ա 862

Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի խորհուրդը

Հեղինակների հոնորարը տրամադրել է
«Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը

Գիտախմբագրական խորհուրդ՝
Գ. Մելիքյան (նախագահ), **Գ. Անանյան, Գ. Ասատրյան, Ա. Ավագյան,**
Ս. Կարաբեկյան, Դ. Հովհաննիսյան, Ա. Սաֆարյան, Ռ. Սաֆարյան

Պատասխանատու խմբագիր՝ **Գ. Մելիքյան**

Ա 862 Արևելագիտության հարցեր (հոդվածների ժողովածու, հատոր VI):
Եր., Երևանի համալս. հրատ., 2006 թ., 380 էջ:

Ա $\frac{0503000000}{704\ (02)06}$ 2006 ԳՄԴ 63.3

ISBN 5-8084-0806-7

© Երևանի համալս. հրատ., 2006 թ.

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

1724 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՆՁՈՒԿՈՒՄ

1. Նախաբան

1724 թ. Երևանի պաշտպանությունը հայոց նոր պատմության ամենավառ էջերից է: Երեքամսյա այդ հերոսամարտի թափը պատկերացնելու համար բավական է նկատել, որ քաղաքը պաշարած օսմանյան բազմահազարանոց բանակի կորուստները կազմել են շուրջ 20,000 զինվոր[1]:

Այսուամենայնիվ, 1724 թ. Երևանի պաշտպանությունը, ինչպես և 1720-ական թթ. հայոց ազատամարտն առհասարակ, իրենց պատմական բացառիկ նշանակությամբ հանդերձ, շատ առումներով տակավին մնում են մութ և ուսումնասիրության կարոտ: Երկու նախորդ հոդվածներում ճշտել ենք 1724 թ. Արևելյան Հայաստանում տիրող իրավիճակի կարևոր հանգամանքները, ներառյալ Երևանի պաշտպանության ընթացքն ու ժամանակագրությունը՝ վճռորոշ ճակատամարտերի ամսաթվերով հանդերձ[2]: Քննությունը խորացնելու համար նախ անհրաժեշտ է համառոտաբար վերհիշել այդ հոդվածներում արված բացահայտումները (այս ուսումնասիրության մեջ բոլոր ամսաթվերը նշվում են հին տոմարով):

---

[1] Տե՛ս **Jonas Hanway**, *An Historical Account of the British Trade over the Caspian Sea*. 2nd ed., Volume II (London, 1754), p. 212; **J. de Hammer**, *Histoire de l'Empire Ottoman*. Tome XIV (Paris, 1839), p. 128; **Laurence Lockhart**, *The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia* (London: Cambridge University Press, 1958), p. 261.

[2] **Ա. Մ. Այվազյան**, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, «*Պատմա-բանասիրական հանդես*» (այսուհետև՝ ՊԲՀ), 1991, № 1 (132), էջ 93-100: **Նույնի՝** Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., ՊԲՀ, 1991, № 2 (133), էջ 102-114:

2. 1724 թ. Երևանի պաշտպանության և առնչակից իրադարձությունների ժամանակագրությունը

1724 թ. ապրիլի կեսեր. օսմանյան բանակը ներխուժում է Արարատյան երկիր: Եղվարդի մոտ Երևանի խանի զորքը բախվում է օսմանցիների առաջապահ գնդին և պարտվելով՝ նահանջում Երևան: *Ապրիլի 25-ից հունիսի 3-ը.* տեղի է ունենում Կարբի գյուղաքաղաքի 40-օրյա ինքնապաշտպանությունը: *Հունիսի 13.* բանակցություններից հետո Կարբին հանձնվում է օսմանցիներին: *Հունիսի 24.* օսմանյան բանակն սկսում է Երևանի պաշարումը: *Հունիսի 26.* թուրքերը գրավում են Երևանի բերդին կից գտնվող որոշ թաղամասեր: Քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության մեծ մասը, կենտրոնանալով Ջորագեղ և Կոնդ թաղամասերում, շուրջ 10,000 զինյալ մարտիկներ տրամադրելով, կազմակերպում է ուժեղ ինքնապաշտպանություն: Երևանի բերդը և «քաղաքը» ենթարկվում են ընդհանուր միասնական պաշարման: Բերդում ամրացած Երևանի խանի հրամանով «քաղաքի» (այն է՝ Ջորագեղ-Կոնդի) պաշտպանությանը մասնակցում են նաև Երևանի մահմեդական ուժերը (անհայտ է մնում՝ դրանք կայազորի ջոկատներից էին, թե՞ քաղաքի բնակչությունից): *Ապրիլ-հունիս.* կտրուկ սրվում են Նախիջևանահայության և պարսկական իշխանությունների հարաբերությունները: *Հուլիսի երկրորդ կես.* Նախիջևանահայության պարագլուխները որոշում են ապստամբել պարսկական իշխանությունների դեմ և անցնել օսմանցիների կողմը: *Հուլիսի 30.* օսմանյան զորաբանակը գրավում է Նախիջևանը: *Հուլիսի երկրորդ կես-օգոստոսի 27.* պարսկական ստվարաթիվ զորաբանակով՝ պաշարված Երևանին օգնության շտապող սիփահսալար Մանսուր-խանը հանգրվանում է Օրդուբադում և, կայուն թիկունք ապահովելու նպատակով, միջոցներ ձեռնարկում օրդուբադցիներին՝ Դավիթ-բեկի իշխանապետության մեջ գտնվող մեղրեցիների հետ հաշտեցնելու ուղղությամբ: *Օգոստոսի 14.* օսմանյան զորքերը ձեռնարկում են ընդհանուր գրոհ Երևանի վրա: Ըստ ամենայնի, այդ գրոհը բերդի վրա չէր տարածվում և ուղղված էր միայն պաշտպանության մեջ թույլ օղակ համարվող «քաղաքի» դեմ: «Քաղաքում» գտնվող մահմեդականները, լքելով պաշտպանական դիրքերը, փախչում և ապաստանում են Երևանի բերդում: Այդ օրվանից սկսած հայերը միայնակ են իրականացնում «քաղաքի», այն է՝ Ջորագյուղ-Կոնդի պաշտպանությունը: *Օգոստոսի 18.* չորս օր առաջ սկսված կատաղի մարտերը ավարտվում են Երևանի հայ պաշտպանների հաղթանակով և օսմանցիների ծանր պարտությամբ: Մասնավորապես, միայն այդ օրը Ջորագեղի համար մղված ճակատամարտում օսմանցիների կորուստները կազմում են 6,000 սպանված, իսկ հայերը տվել էին 1300 զոհ: *Օգոստոսի 19-24-ի միջև.* նոր կատաղի գրոհ է ձեռնարկվում Կոնդի վրա: Հայերը հաջողությամբ հետ են մղում նաև այդ հարձակումը: *Օգոստոսի 27.* Նախիջևանի հայկական զորաջոկատների օժանդակությամբ օսմանցիները ջախջախում են Երևանի խանի եղբայր Մանսուր-խանի պարսկական զորաբանակը և գրավում են Օրդուբադը: *Սեպտեմբերի 7.* Սարի Մուստաֆա փաշայի Թիֆլիսից դուրս եկած բանակը միանում է Երևանը պաշարող օսմանյան զորախմբին: *Սեպտեմբերի 8.* օսմանցիները գրավում են Երևանի «քաղաքի» վերջին զանգված Ջորագեղը: Շուրջ 30,000 հայ կոտորվում է, հազարները՝ քշվում գերության: *Սեպտեմբերի 16.* Երևանի բերդում պատսպարված պարսկական կայազորն սկսում է օսմանցիների հետ բանակցություններ վարել հանձնվելու պայմանների մասին: *Սեպտեմբերի 23.* Երևանի բերդը հանձնվում է օսմանցիներին:

3. Երևանի խաների ինքնությունն ու հարաբերությունները հայերի հետ (1716-1724 թթ.)

Հայկական արդի պատմագիտությունը, վստահելով Աբրահամ Երևանցու հաղորդմանը, 1724 թ. պաշտպանության ընթացքում Երևանի խան է ճանաչում Մեհր-Ալի (Միհրալի) խանին: Այսպես, Երևանի խաների ինքնության հարցը հատուկ քննության առարկա դարձրած մեծավաստակ արևելագետ Հ. Փափազյանը, հանդիպելով Երևանի խաների արձակած երկու հրամանագրերի մասին Սիմեոն Երևանցու տեղեկությանը, որում 1709 թ. դրությամբ խան է վկայակոչված Մեհր-Ալին, իսկ 1722 թ. դրությամբ՝ Ալլահ-կուլին (Ալլահղուլի)[1], գրում է.

«Պետք է կարծել, որ Սիմեոն Երևանցին սխալմամբ է առաջին հրամանագիրը վերագրել Մեհր-Ալի խանին, իսկ վերջինը Ալլահ-կուլի խա-

[1] «Ի ժամանակս Շահ-Հիւսէյինին և Ջուղայեցի Աղեքսանդր Կաթուղիկոսին մերոյ՝ Մեհրալի խանն Երևանու գաւառայ [=թա՛ղիկա, հրամանագիր] մի տայ սրբո. Աթոռոյս հինգ տաճիկ վկայից կնքով, ի ՌԵԻԱ թուին տաճկաց [=Հիջրի 1121=1709 թ. մարտի 13-ից մինչև 1710 թ. մարտի 1-ը ներառյալ]. Նոյնպէս և ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին մերոյ Ալլահ-ղուլի խանն Երևանու գաւառայ մի տայ սրբոյ Աթոռոյս միոյ տաճիկ վկայի կնքով, ի ՌԵԺԴ թուին տաճկաց [=Հիջրի 1134=1721 թե հոկտեմբերի 20-ից մինչև 1722 թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ]». – տե՛ս **Սիմէոն Երևանցի**, *Ջամբռ*, Վաղարշապատ, 1870, էջ 229-230:

նին: Ստույգ տեղեկություն կա, որ 1724 թ. թուրքական արշավանքների օրերին Երևանի բեկլարբեկին Մեհր-Ալի խանն էր: Դա Երևանի հերոսական դիմադրության մանրամասն նկարագրության հեղինակ Աբրահամ Երևանցու հավաստի վկայությունն է: Իր «Պատմության» մեջ նա բազմիցս հիշում է Մեհր-Ալի խանին, անվանելով՝ «իշխանն Երևանայ Միհրալի», պատմելով նաև, թե ինչպես նա կաթողիկոս Աստվածատուր Համադանցու միջնորդությամբ Երևանի բերդը հանձնում է Աբդուլլա-փաշային»[1]:

Նույն հոդվածում Հ. Փափազյանն առաջարկում է այսպիսի ժամանակագրություն՝ «Ալլահ-կուլի խան (-1709), Մեհր-Ալի խան (-1724)»[2]: Սակայն «Հայկական սովետական հանրագիտարան»-ի 3-րդ հատորում (որն, ի դեպ, լույս է տեսել նույն թվականին, ինչ և վերոհիշյալ հոդվածը) Հ. Փափազյանը տալիս է հակառակ թվագրումը՝ «Մեհր-Ալի խան (1709-1719), Ալլահ-կուլի խան (1719-1725)»[3]: Հովհաննես Շահխաթունյանցը թվագրում է Մեհր-Ալի խանի իշխանությունը 1709-1719, իսկ Ալլահ-կուլի խանինը՝ 1719-1722 թթ., ավելացնելով, որ հենց նրանից էլ օսմանցիները գրավել են Երևանը, բայց այդ գրավման տարեթիվը սխալմամբ համարելով 1722-ը[4]:

Սակայն կան լրացուցիչ այլ տեղեկություններ, որոնք աներկբայորեն հաստատում են, որ մոտավորապես 1716 թվականից մինչև 1724 թ. Երևանի խաներ են եղել տարբեր գործիչներ, սակայն ո՛չ Մեհր-Ալի խանը:

1724 թ. պաշտպանության ժամանակ Երևանի խանի ով լինելը հստակ նշում է XVIII դարի վրաց պատմիչ Սեխնիա Չխեիձեն.

«...եկավ սերասկյարը, գրավեց Երևանի բերդը և դուրս բերեցին Երևանի խանին՝ Ալի-կուլի խանին, որը Ցիցիշվիլիների տոհմից էր: Նրան շահը պատիվ ցույց տվեց ու պարգևատրեց և համաձայնեց

[1] **Հ. Փափազյան**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ-ԺԷ դդ.). - «*Լրաբեր հասարակական գիտությունների*», 1977, № 1, էջ 41: Հ. Փափազյանը, հետազոտելով Մաշտոցի անվ. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, նշում է, որ Սիմեոն Երևանցու վկայակոչած հրամանագրերը «ցավոք Կաթողիկոսական դիվանում չեն պահպանվել» (նույն տեղում):

[2] Նույն տեղում, էջ 44:

[3] «Հայկական սովետական հանրագիտարան», Երևան, 1977, էջ 571:

[4] **Յով. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատոյ: Հ. Բ (Վաղարշապատ, 1842), էջ 139:

[բավարարել նրա խնդրանքն ու] արձակել շահի մոտ: Այդ ժամանակ շահն Արդեբիլում էր»[1]:

Գիլանենցի օրագրում ևս արձանագրված է, որ 1723 թ. դրությամբ Երևանում պարսկական իշխանության գլուխ կանգնած դեմքը՝ «Յարևանայ նայիպն (խանի տեղակալը - Ա. Ա.) վրացու զավակ այ, շիայե այ, Օսմանցուն խետ դօստ չէ...»[2]:

Երևանի խանի վրացի լինելու կապակցությամբ տեղին է վերհիշել իրանագետների հետևյալ կարևոր դիտարկումը. «Ի տարբերություն Սեֆևիների պետության այլ բեկլարբեկիությունների, որոնք կենտրոնական իշխանության թուլության հետևանքով մեծ մասամբ վերածվել էին ժառանգական ֆեոդալական տիրույթի, Չուխուր-Սա'դում բեկլարբեկիության պաշտոնը Կաջար ցեղի սեփականությունը չդարձավ[3]: Դեռևս Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից որդեգրվեց մի քաղաքականություն, ըստ որի ծայրամասային բեկլարբեկիները նշանակվում էին ոչ թե կըզըլբաշ ցեղերի տոհմիկ առաջնորդներից, այլ շահի արքունի գվարդիայի զինվորականության՝ «ղուլամների», շարքերից, որոնք, չնայած իրենց ոչ տոհմիկ ծագմանը, արժանանում էին «խան» տիտղոսին և զբաղեցնում բեկլարբեկիության բարձր պաշտոնը»[4]:

Հայտնի է նաև, որ ղուլամները մահմեդականացված քրիստոնյաներ էին, զգալի չափով, եթե ոչ մեծ մասամբ՝ վրացիներ[5]: Մինչև 1724 թ. Չուխուր-Սա'դի բեկլարբեկիությունը ստացել են ծագումով մի քանի վրացիներ, այդ թվում Քեյխոսրով խանը (1647-1652 թթ.) և Զալ խանը (1679-1689 թթ.)[6]: Նկատենք նաև, որ Ցիցիշվիլիները, որոնցից էին Ալի-կուլին և 1724 թ. սիփահսալար նշանակված նրա եղբայր Մանսուր-

[1] **Сехниа Чхеидзе**, История Грузии. Перевод выполнил, предисловием, указателем и словарями снабдил Н. Т. Накашидзе. Тбилиси, 1976, с. 37.

[2] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, Թիֆլիս, 1863, § 122, էջ 204:

[3] Հ. Փափազյանը նկատի ունի այն, որ Աղջակոյունլու-Կաջար ցեղից էին 1604-1639 թթ. ժառանգաբար Երևանի բեկլարբեկի եղած Ամիր-Գունա և նրա որդի Թահմասպկուլի խաները:

[4] **Հ. Փափազյան**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ-ԺԷ դդ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 1, էջ 33-34. հմմտ. **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, 118; **D. M. Lang**, "Georgia and the Fall of the Safavi Dynasty", Bulletin of SOAS, V. XIV, part 3, pp. 524-526:

[5] **D. M. Lang**, "Georgia and the Fall of the Safavi Dynasty", p. 525.

[6] Նրանց մասին տե՛ս **Հ. Փափազյան**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ-ԺԷ դդ.), նշվ. աշխ., էջ 34, 38-39:

խանը (որին դեռ ստորև անդրադառնալու ենք), վրաց իշխանական ամենահեղինակավոր տոհմերից էին[1]: Ըստ այդմ էլ, այս Ալի-կուլի խանին չպետք է շփոթել Վախթանգ Զ-ի փուչ և անձեռնհաս եղբայր Իեսեի հետ, որը մահմեդականանալով՝ նույնպես ընդունել էր Ալի-կուլի-խան անունը[2] (իսկ օսմանցիները նրան Մուստաֆա էին կոչում)[3]:

Ավելին՝ Մատենադարանում պահպանվող վավերագրերի համաձայն, Հիջրեթի 1131 թ. (այսինքն՝ 1718 թ. նոյեմբերի 18-ից մինչև 1719 թ. հոկտ. 19-ը ներառյալ) Երևանի բեկլարբեկի է հիշվում Ալի-կուլի խանը[4], իսկ նրանից առաջ՝ մինչև 1717 թ., ոմն Միրզա Մահմուդ բեյը[5]: Ինչպես վերը նշվեց, Սիմեոն Երևանցին էլ հիշատակում է Ալլահ-կուլի խանի մի հրամանագիրը, որ արձակվել է 1722 թ.:

Սակայն, սրանցից բացի, 1722-1724 թթ. Չուխուր Սա'դի բեկլարբեկի (իմա՝ Երևանի խան) են հիշատակվում ևս երկուսը. ա. Կախեթի տիրակալ Կոնստանտինը, որն առավել հայտնի էր իր մահմեդական անվամբ՝ Մուհամմադ-կուլի (Մահմադղուլի) խան (այդ պաշտոնում հիշվում է ընդհուպ մինչև 1723 թ. դեկտեմբերը[6]), բ. 1724 թ. օգոստոսին՝ հյուսիսային Իրանից և Նախիջևանից իր զորքով պաշարված Երևանին օգնության հասնելու փորձ անող Մանսուր-խանը[7]:

Կոնստանտին/Մուհամմադ-կուլի խանի՝ Չուխուր Սա'դի բեկլարբեկի նշանակման ժամանակը ճշտվում է հետևյալ քննությամբ: Սեխնիա

[1] **Ю. Д. Анчабадзе, Н. Г. Волкова**, Старый Тбилиси. Город и горожане в XIX веке. Отв. ред. С. А. Арутюнов. Москва: "Наука", 1990, с. 28.

[2] **D. M. Lang**, "Georgia and the Fall of the Safavi Dynasty", p. 534.

[3] **Сехниа Чхеидзе**, История Грузии, с. 37.

[4] **Մաշտոցի անվ. Մատենադարան**, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 276 (տե՛ս Մատենադարանի «Էջմիածնի կաթողիկոսական դիվանի պարսկերեն-արաբերեն-թուրքերեն վավերագրերի ցուցակ», № 29, էջ 78):

[5] Նույն տեղում, թղթ. 1 գ, վավ. 275 բ, 286 (տե՛ս Մատենադարանի «Էջմիածնի կաթողիկոսական դիվանի պարսկերեն-արաբերեն-թուրքերեն վավերագրերի ցուցակ», № 29, էջ 77, 80):

[6] 1723 թ. դեկտեմբերի 23-ին Կ. Պոլսում Վենետիկի դեսպանի գրած զեկուցագիրը, նկարագրելով դրանից երկու ամիս առաջ Գանձակում Իբրահիմ փաշայի կրած պարտությունը, վերջինիս հակառակորդ է անվանում է «Երևանի Մուհամմեդ-կուլի խանին» (տե՛ս Mary L. Shay, The Ottoman Empire from 1720 to 1734. As Revealed in Dispatches of the Venetian Baily. (Urbana: The Univ. of Illinois Press, 1944), p. 111:

[7] **Հ. Դ. Փափազյան**» Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ. – ՊԲՀ, 1987, № 1, էջ 93. հմմտ. Тбилисская коллекция персидских фирманов, Т. II, составители М. А. Тодуа и И. К. Шамс. Подготовка к печати, перевод, комментарии и словарь М. А. Тодуа. Тбилиси, 1989, док. 20, с. 46-47: **Ա. Մ. Այվազյան**, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 105-113:

Չխեիձեն հաղորդում է, որ այն բանից հետո, երբ 1722 թ. մարտի 8-ին աֆղանների դեմ տեղի ունեցած Գյուլնաբադի ճակատամարտում զոհվում է դուլար-աղասի (դուլամների պետ) Ռոստոմը (որը Վախթանգ Զ-ի եղբայրն էր), շահ Սուլթան-Հուսեյնը դուլար-աղասի է նշանակում Վախթանգի որդուն՝ Բաքարին, հրամայելով նրան զորքով շտապ օգնության հասնել Սպահան[1]: Բաքարն իր զորքով արշավում է դեպի հարավ և ճամբար դնում Տաշիրում, սակայն այդտեղից էլ Վախթանգը նրան «համոզում և հետ է կանչում» իր մոտ, որպեսզի հնարավորին չափ մեծ բանակով պատրաստ լինի միանալու ռուսական զորքերի խոստացված առաջխաղացմանը: Դ. Լանգը Բաքարի արշավանքը թվագրում է 1722 թ. մայիսին[2], սակայն ավելի հավանական է թվում հունիսը, քանի որ Սեխնիա Չխեիձու պատմածից պարզվում է, որ Բաքարի այդ արշավանքի հետ մոտավորապես միաժամանակ տեղի է ունեցել ևս երկու դեպք. ա) շահ Սուլթան-Հուսեյնը «Կախեթը, Երևանը, Շամշադինը և Կազախը» շնորհել է Մուհամմադ-կուլի խանին, իսկ Վախթանգին հանձնել է հյուսիսային Իրանի և Անդրկովկասի պարսկական ռազմական ուժերի գլխավոր հրամանատարությունը՝ Ազերբայջանի սարդարությունը[3]:

[1] Տե՛ս **Сехниа Чхеидзе**. История Грузии, с. 33; [M. Brosset], Histoire de la Georgie, II Partie, II livraison, SPB, 1857, **Sekhnia Chkeidze**, Chronique, p. 36: Բաքարը 1716-1719 թթ. Քարթլիի նայիբն էր, ապա 1717 թ. օգոստոսի 1-ից ջանիշինը կամ փոխարքան (**D. M. Lang**, »Georgia and the Fall of the Safavi Dynasty», p. 534. հմմտ. **Сехниа Чхеидзе**. История Грузии, с. 31), մի պաշտոն, որ իր հայր Վախթանգը զբաղեցնում էր 1703-1711 թթ. (**Г. Г. Пайчадзе**, Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в., Тбилиси, 1970, с. 42): Ս. Չխեիձեն Քարթլիի ջանիշինին ավանդույթի համաձայն անվանում է թագավոր, ինչը ստիպել է Մելիքսեթ-բեկին թյուրիմացաբար Բաքարի մասին գրել. «Բաքար, վրաց թագավոր, 1716-1719թթ., Վախթանգ VI-ի որդին էր (**Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 25, 27, ծնթ. 5): Բացի այդ, «վրաց թագավոր» ասելը շատ անորոշ է, քանզի նույն այդ ժամանակաշրջանում կային Քարթլիի, Կախեթի, Իմերեթի վրաց թագավորներ, թեև 1632-1744 թթ. «Գյուրջիստանի վալիի», այսինքն՝ շահի փոխանորդի իր կարգավիճակով դրանց մեջ ամենաբարձրը Քարթլիի թագավորն էր (տե՛ս **Г. Г. Пайчадзе**, Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в., с. 25):

[2] **D. M. Lang**, "Georgia and the Fall of the Safavi Dynasty", p. 538.

[3] **Сехниа Чхеидзе**, История Грузии, с. 33. Չխեիձեի երկի այս հատվածի հայերենով թարգմանությունը տե՛ս **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 25: Վախուշտին Մուհամմադ-կուլի խանի նշանակումը Երևանի խան սխալմամբ նշում է 1723 թվով (**Вахушти Багратиони**, История царства грузинского. Перевод, предисловие, словари и указатели Н. Т. Накашидзе. Тбилиси, 1978, с. 171): Իրանի Ազերբայջան վարչական միավորի մասին տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», Կալվածագրեր, պրակ Ա., կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, էջ 143-146, 345-348 (ռուսերեն):

Ըստ Վախուշտիի, շահը պարգևել է Կախեթը (Երևանը չի նշվում) Մուհամմադ-կուլի խանին 1722 թ. մարտին[1], որ, ամենայն հավանականությամբ, Սպահանում հրովարտակը գրելու ժամանակն է, իսկ այն Վրաստան կհասներ ամենաշուտն ապրիլի վերջին կամ մայիսին:

Նախորդ ուսումնասիրություններից մեկում ճշտել ենք նաև, որ Վախթանգն Ազերբայջանի սարդար նշանակվել էր 1722 թ. հունիսի 8-ից մինչև 17-ը, իսկ Սպահանից Թիֆլիս շահի հրովարտակը, հասանելիք պարգևներով՝ «թաջ ու թօմարով, ջավայիրե թրով ու պատվական խալաթով»[2], հասել է միայն հուլիսի վերջին-օգոստոսի սկզբին[3]: Չխեիձեի, Վախուշտիի և մյուս աղբյուրների տեղեկությունների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ Մուհամմադ-կուլի խանի նշանակումը Չուխուր-Սա'դի բեկլարբեկի փոքր-ինչ (1-3 ամսով) նախորդել է Վախթանգին՝ Ազերբայջանի սարդար նշանակելուն: Ըստ ամենայնի, շահ Սուլթան-Հուսեյնը գիտակցում էր Վախթանգի անհուսալիությունը (նաև պետք է արդեն տեղեկացված լիներ ռուսների հետ նրա ջերմ կապերի մասին), սակայն նկատի առնելով Վախթանգի տրամադրության տակ գտնվող հայ-վրացական զգալի զինյալ ուժը՝ փորձում էր, մի կողմից, սիրաշահել և օգտագործել նրան՝ շնորհելով Ազերբայջանի սարդարությունը, իսկ մյուս կողմից, Քարթլիի այդ հեղինակավոր տիրակալին հակակշիռ էր ստեղծում՝ Երևանը կանխապես հանձնելով նրա կախեթցի մրցակից Մուհամմադ-կուլի խանին:

Այսպիսով, Չուխուր Սա'դի բեկլարբեկիությունը Մուհամմադ-կուլի խանին էր տրվել 1722 թ. մարտից մինչև հուլիսն ընկած միջոցին: Սակայն վերջինս գործում էր հիմնականում Կախեթում և Գանձակում[4], ուստի Երևանում նշանակել էր իրեն տեղակալ՝ «նայիբ».

«Վրաստանայ Կախէթու վալի Մամատ-ղուլի խանին ան տվել Յարևանայ խանութիւնն, որ յինքըն Կախէթ այ նստած, **ուր նայիպն**

[1] **Вахушти Багратиони**. История царства грузинского, с. 310.

[2] Եղիա Կարնեցու դիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968, էջ 127, 138: Չխեիձեն նշում է միայն «խալաթն ու արծաթե գուրզը» (տե՛ս **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 25), մինչդեռ Վախուշտին՝ բոլոր չորս նշանները (**Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 107):

[3] **Ա. Այվազյան**, «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». - ՊԲՀ, 1990, 3 (130), էջ 81-82:

[4] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, Թիֆլիս, 1863, §113, էջ 200:

Յարևան այ նստացուցել» (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)[1]:

Արդ, ո՞վ էր այդ նայիբը. արդյո՞ք Ալի-կուլին էր, որն, ինչպես տեսանք, Երևանի խան է հիշատակվում 1719 և 1724 թթ., թե՞ Ալլահ-կուլին էր, որին սկզբնաղբյուրները նույն պաշտոնում են վկայակոչում 1722 թ., թե՞ մի երրորդ գործիչ, իսկ գուցե՞ Ալի-կուլին և Ալլահ-կուլին նույն անձն է (թեև դրանք սկզբունքորեն տարբեր անուններ են. մեկը նշանակում է Ալիի ստրուկ, մյուսը՝ Աստծո ստրուկ)[2]: Այժմ այս հարցերին կարող ենք պատասխանել հավաստիության բարձր աստիճանով: Նկատի ունենալով Ալի-կուլի խանի և «նայիբի» վրացի լինելու հանգամանքը, կարելի է համարել, որ նայիբը հե՛նց Ալի-կուլի խանն էր: Իսկ եթե բաղդատենք Հ. Շահխաթունյանցի օգտագործած աղբյուրի այն տեղեկությունը, ըստ որի Երևանի գրավման պահին՝ 1724 թ., Երևանի խանն Ալլահ-կուլին էր՝ Ս. Չխեիձու այն հաղորդման հետ, ըստ որի նույն պահին նույն պաշտոնում էր Ալի-կուլին, ապա մնում է միայն եզրակացնել, որ Ալի-կուլին և Ալլահ-կուլին նույն անձնավորությունն է: Հետևաբար, 1722 թ. ստանալով Չուխուր-Սա'դի բեկլարբեկիությունը, Մուհամմադ-կուլի խանը Երևանում նայիբ է կարգել արդեն իսկ առնվազն 1719 թ. Երևանի խանի պաշտոնում գտնվող Ալի-կուլի/Ալլահ-կուլի խանին (հետայսու նախընտրելու ենք Ալի-կուլի անվան գործածումը): Վերջինիս նայիբի պաշտոնում նշանակելու ժամանակը ևս հնարավոր է դառնում ճշտել՝ մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած օրերից մեկում, այսինքն՝ Մուհամմադ-կուլի խանի՝ Չուխուր-Սա'դի բեկլարբեկի նշանակվելու պահից սկսած մինչև Հիջրեթի 1134 թ. Ալլահ-կուլի խանի արձակած (Սիմեոն Երևանցու կողմից հիշատակվող) մի հրամանագրի ամենավերջին հնարավոր օրը:

[1] Նույն տեղում, §104, էջ 196: Ընդգծված հատվածը ռուսերեն և անգլերեն հրատարակություններում սխալ է թարգմանված, նրանցում կորել է Երևանի նայիբին Մուհամմադ-կուլի խանի կողմից նշանակված լինելու հաղորդման իմաստը (**Петрос ди Саргис Гиланенц**, Дневник осады Испагани афганами (1722-1723). Перевод и объяснения К. Патканова. СПб., 1870, с. 40; [**Petros di Sarkis Gilanentz**], The Chronicle of Petros di Sarkis Gilanentz. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and Additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, p. 49):

[2] Ք. Պատկանյանն ափսոսանքով նկատում էր, որ «ոչ մի կերպ չի գտել» այդ նայիբի անունը (**Петрос ди Саргис Гиланенц**, Дневник осады Испагани афганами, с. 40, прим. 1):

Ըստ Վախուշտիի, շահը պարգևել է Կախեթը (Երևանը չի նշվում) Մուհամմադ-կուլի խանին 1722 թ. մարտին[1], որ, ամենայն հավանականությամբ, Սպահանում հրովարտակը գրելու ժամանակն է, իսկ այն Վրաստան կհասներ ամենաշուտն ապրիլի վերջին կամ մայիսին:

Նախորդ ուսումնասիրություններից մեկում ճշտել ենք նաև, որ Վախթանգն Ազերբայջանի սարդար նշանակվել էր 1722 թ. հունիսի 8-ից մինչև 17-ը, իսկ Սպահանից Թիֆլիս շահի հրովարտակը, հասանելիք պարգևներով՝ «թաջ ու թօմարով, ջավայիրե թրով ու պատվական խալաթով»[2], հասել է միայն հուլիսի վերջին-օգոստոսի սկզբին[3]: Չխեիձեի, Վախուշտիի և մյուս աղբյուրների տեղեկությունների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ Մուհամմադ-կուլի խանի նշանակումը Չուխուր-Սա'դի բեկլարբեկի փոքր-ինչ (1-3 ամսով) նախորդել է Վախթանգին՝ Ազերբայջանի սարդար նշանակելուն: Ըստ ամենայնի, շահ Սուլթան-Հուսեյնը գիտակցում էր Վախթանգի անհուսալիությունը (նաև պետք է արդեն տեղեկացված լիներ ռուսների հետ նրա ջերմ կապերի մասին), սակայն նկատի առնելով Վախթանգի տրամադրության տակ գտնվող հայ-վրացական զգալի զինյալ ուժը՝ փորձում էր, մի կողմից, սիրաշահել և օգտագործել նրան՝ շնորհելով Ազերբայջանի սարդարությունը, իսկ մյուս կողմից, Քարթլիի այդ հեղինակավոր տիրակալին հակակշիռ էր ստեղծում՝ Երևանը կանխապես հանձնելով նրա կախեթցի մրցակից Մուհամմադ-կուլի խանին:

Այսպիսով, Չուխուր Սա'դի բեկլարբեկիությունը Մուհամմադ-կուլի խանին էր տրվել 1722 թ. մարտից մինչև հուլիսն ընկած միջոցին: Սակայն վերջինս գործում էր հիմնականում Կախեթում և Գանձակում[4], ուստի Երևանում նշանակել էր իրեն տեղակալ՝ «նայիբ».

«Վրաստանայ Կախէթու վալի Մամատ-ղուլի խանին ան տվել Յարևանայ խանութիւնն, որ յինքըն Կախէթ այ նստած, **ուր նայիպն**

[1] **Вахушти Багратиони**. История царства грузинского, с. 310.

[2] Եղիա Կարնեցու դիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968, էջ 127, 138: Չխեիձեն նշում է միայն «խալաթն ու արծաթե գուրզը» (տե՛ս **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 25), մինչդեռ Վախուշտին՝ բոլոր չորս նշանները (**Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 107):

[3] **Ա. Այվազյան**, «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». - ՊԲՀ, 1990, 3 (130), էջ 81-82:

[4] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, Թիֆլիս, 1863, §113, էջ 200:

Յարևան այ նստացուցել» (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)[1]:

Արդ, ո՞վ էր այդ նայիբը. արդյո՞ք Ալի-կուլին էր, որն, ինչպես տեսանք, Երևանի խան է հիշատակվում 1719 և 1724 թթ., թե՞ Ալլահ-կուլին էր, որին սկզբնաղբյուրները նույն պաշտոնում են վկայակոչում 1722 թ., թե՞ մի երրորդ գործիչ, իսկ գուցե՞ Ալի-կուլին և Ալլահ-կուլին նույն անձն է (թեև դրանք սկզբունքորեն տարբեր անուններ են. մեկը նշանակում է Ալիի ստրուկ, մյուսը՝ Աստծո ստրուկ)[2]: Այժմ այս հարցերին կարող ենք պատասխանել հավաստիության բարձր աստիճանով: Նկատի ունենալով Ալի-կուլի խանի և «նայիբի» վրացի լինելու հանգամանքը, կարելի է համարել, որ նայիբը հե՛նց Ալի-կուլի խանն էր: Իսկ եթե բաղդատենք Հ. Շահխաթունյանցի օգտագործած աղբյուրի այն տեղեկությունը, ըստ որի Երևանի գրավման պահին՝ 1724 թ., Երևանի խանն Ալլահ-կուլին էր՝ Ս. Չխեիձու այն հաղորդման հետ, ըստ որի նույն պահին նույն պաշտոնում էր Ալի-կուլին, ապա մնում է միայն եզրակացնել, որ Ալի-կուլին և Ալլահ-կուլին նույն անձնավորությունն է: Հետևաբար, 1722 թ. ստանալով Չուխուր-Սա'դի բեկլարբեկիությունը, Մուհամմադ-կուլի խանը Երևանում նայիբ է կարգել արդեն իսկ առնվազն 1719 թ. Երևանի խանի պաշտոնում գտնվող Ալի-կուլի/Ալլահ-կուլի խանին (հետայսու նախընտրելու ենք Ալի-կուլի անվան գործածումը): Վերջինիս նայիբի պաշտոնում նշանակելու ժամանակը ևս հնարավոր է դառնում ճշտել՝ մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած օրերից մեկում, այսինքն՝ Մուհամմադ-կուլի խանի՝ Չուխուր-Սա'դի բեկլարբեկի նշանակվելու պահից սկսած մինչև Հիջրեթի 1134 թ. Ալլահ-կուլի խանի արձակած (Սիմեոն Երևանցու կողմից հիշատակվող) մի հրամանագրի ամենավերջին հնարավոր օրը:

[1] Նույն տեղում, §104, էջ 196: Ընդգծված հատվածը ռուսերեն և անգլերեն հրատարակություններում սխալ է թարգմանված, նրանցում կորել է Երևանի նայիբին Մուհամմադ-կուլի խանի կողմից նշանակված լինելու հաղորդման իմաստը (**Петрос ди Саргис Гиланенц**, Дневник осады Испагани афганами (1722-1723). Перевод и объяснения К. Патканова. СПб., 1870, с. 40; [**Petros di Sarkis Gilanentz**], The Chronicle of Petros di Sarkis Gilanentz. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and Additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, p. 49):

[2] Ք. Պատկանյանն ափսոսանքով նկատում էր, որ «ոչ մի կերպ չի գտել» այդ նայիբի անունը (**Петрос ди Саргис Гиланенц**, Дневник осады Испагани афганами, с. 40, прим. 1):

Արժանի է ուշադրության Երևանի խանի դիրքորոշման հետ կապված մի դրվագ: 1722 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ բախումներ էին տեղի ունենում Վախթանգի և Մուհամմադ-կուլի խանի զորքերի միջև[1], մի կարճատև ժամանակահատվածով Երևանը հայտնվում է Վախթանգի կողմնակիցների վերահսկողության տակ, ինչի մասին հուշում է Վախուշտիի հետևալ հաղորդումը. «Վախթանգը կոտորում է Գոքչալու ցեղը, իսկ Երևանում գրավում են Մուհամմադ-կուլի խանի ունեցվածքը», որից Մուհամմադ-կուլի խանը խստիվ «վիրավորվում է» և Վախթանգի դեմ թշնամական նոր քայլեր ձեռնարկում[2]:

Թվում է, թե հենց այս դեպքերի ուշացած արձագանքն է տեղ գտել Կ. Պոլսում Վենետիկի դեսպանի 1723 թ. փետրվարի 19-ին հղած մի հաղորդագրության մեջ, ուր ասված է, թե Թահմասպը «որոշ օժանդակություն ստացավ Վրաստանի խանից, որը, տեսնելով Երևանի խանի փոփոխամտությունը՝ զորքեր մտցրեց [Երևան]՝ պահպանելու համար այդ քաղաքի հավատարմությունը Հուսեյնի որդուն»[3]: Ըստ երևույթին, Վախթանգն ինքն է այդպես բացատրել Երևանի խանի դեմ իր գործողությունները: Հնարավոր է, որ թշնամական հարաբերությունները Երևանի Ցիցիշվիլի Ալի-կուլի խանի (նույն ինքն Մուհամմադ-կուլի խանի «նայիբ»-ի) և Վախթանգի միջև, բացի Երևանի վրա վերահսկողություն հաստատելու ռազմավարական նպատակների ներհակությունից, առաջացել էին ավելի վաղ: Բանն այն է, որ 1719 թ. վերադառնալով Քարթլի՝ Վախթանգն անմիջապես ձերբակալել էր հինգ վրացի ազնվականների և ցանկացել նրանց մահապատժի ենթարկել, սակայն վրաց կաթողիկոսի միջնորդությամբ, նրանց ընդամենը «այծերի պես» Օսիայում ստրկության էին վաճառել: Ահա այս հինգի մեջ էր նաև Բագրատ Ցիցիշվիլին[4]: Այսպիսով, Վախթանգի և Ցիցիշվիլիների միջև կարող էր լինել մի ինչ-որ հին վաղեմի թշնամություն: Ամեն դեպքում, ինչպես քիչ հետո կտեսնենք, 1723 թ. սկզբից իշխանությունը Երևանում արդեն նայիբի ձեռքին էր, իսկ Երևանի զորքերը Վախթանգի դեմ էին կռվում:

Մոտավորապես 1722 թ. նոյեմբերին Վախթանգը և Մուհամմադ-կուլի

[1] Տես **Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 108, 172; Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями от 1639 г. по 1770 г., СПб, 1861, с. 142; **Եսայի Հասան-Ջալալեան**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: Երուսաղէմ, 1868, էջ 51:

[2] **Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 172.

[3] **Shay**, The Ottoman Empire from 1720 to 1734, p. 100.

[4] **Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 105-106.

խանը հաշտվում են, սակայն դեկտեմբերի սկզբին նրանց միջև սկսվում է արդեն իսկական երեքամսյա մի պատերազմ[1], որը տևում է «յառաջ-ներորդէն դեկտեմբէր ամսոյ՝ մինչև ի տօն սրբոյ Զատկին»[2], այսինքն՝ մինչև 1723 թ. ապրիլի 3-ը: Ըստ Եսայի Հասան-Ջալալյանի, Վախթանգը կռվում էր «վրացի և հայ զօրօք, իսկ Միամմատղուլին պարսկօք»[3]: Արդ, այն, որ այդ ընթացքում Երևանը դարձյալ Մուհամմադ-կուլի խանի ենթակայության տակ էր, երևում է Վախուշտիի հաղորդումից, ըստ որի՝ 1723 թ. սկզբին «Մուհամմադ-կուլի խանը օգնության բերեց Գանձակի խանին և երևանյան զորքերը...»[4]: Երևանի զորքերի մասնակցությունը Վախթանգի դեմ կռիվներին հաստատում են նաև հայկական աղբյուրները[5]:

Այդ պատերազմի ընթացքում Մուհամմադ-կուլի խանը Երևանից ժամանած զորքի և Կախեթի իր զորքի հետ միասին արշավում է նաև Ղարաբաղի հայոց սղնախների դեմ, սակայն պարտվում է և մեծ կորուստներ տալով՝ նահանջում: Նրա զորքերի մեջ եղած երևանյան գունդը, «Գեղագունու երկրի» միջով նահանջելիս, այդտեղի հայերից է վրեժխնդիր լինում, կոտորելով 2000-ից ավել «մեծ թէ պստիկ, կին, մարդ, մինչի կաթնայկեր արախայ» հայ, թալանվում է նրանց ունեցվածքը, կանայք գերեվարվում և բերվում են Երևան: Հայկական զորքից կրած պարտության մասին տեղեկանալով՝ «յԱրևանայ նայիբն և թուրքերն (իմա՝ մահմեդականները – Ա.Ա.)» սկսում են քաղաքի և շրջակայ գյուղերի հայերի դեմ վայրագ բռնություններ կիրառել՝ «Խայերին թալանելն, կին, երեխայ և խիզան քաշելն և մարդ սպանելն», այն աստիճան, որ «Խայերն ցերէկօվ կարել չեն ելէլ տանէ դուս գոլ... էս ողորմելի Խայերն կըտեսնէն՝ որ էլ ճար չկայ, նեղութիւնն օր ըստ օրէ իվելաման այ, շատ գեղ և շատ մարդ խիզանօվ փախան, գնացին Օսմանցու երկիրն»[6]:

Իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոփոխություն է կրում

[1] **Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 109, 172-173:

[2] **Եսայի Հասան-Ջալալեան**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: Երուսաղէմ, 1868, էջ 52-53:

[3] Նույն տեղում:

[4] **Вахушти Багратиони**, История царства грузинского, с. 109.

[5] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, §117, էջ 202:

[6] Նույն տեղում, § 115, էջ 201:

օսմանյան ներխուժումից և, հատկապես, 1723 թ. հունիսին Թիֆլիսի գրավումից հետո: Մասնավորապես, պարսկական իշխանությունների ծայրահեղ թշնամական վերաբերմունքը հայկական զինված ուժերի և առհասարակ հայության նկատմամբ աստիճանաբար փափկում է, նույնիսկ հայ-պարսկական համատեղ հակաօսմանյան ճակատ ստեղծելու փորձեր են արվում[1]: Հակաօսմանյան պայքարի ղեկավար և հայոց սղնախների հետ համագործակցության կողմնակից է դառնում նաև Մուհամմադ-կուլի խանը:

4. Երևանի պարսից իշխանության քաղաքական դիրքորոշումն ու հայերի հետ հարաբերությունները 1724 թ.

Ըստ Աբրահամ Երևանցու, 1724 թ. մարտի 6-ին «Արբայ-չայ» կոչված վայրում (հավանաբար, Ախուրյանի ափին) ճամբարում է դեպի Երևան արշավող օսմանյան մեծ բանակի առաջամարտիկ մի զորագունդ (1800 զինվոր)՝ «Արզրումցի Եալղուզ Հասանի» և «Ղօչ Ալիի» հրամանատարությամբ: Մի քանի օր անց Եղվարդի մոտակայքում տեղի է ունենում ճակատամարտ սրանց և Երևանի խանի 12.000-անոց զորքի միջև: Բայց թվային գերակշռությունը դեր չի կատարում. Երևանի խանի զորքը պարտվում է և նահանջում Երևան[2]: Քանի որ Աբրահամ Երևանցու՝ Երևանի պաշտպանությանը վերաբերող ժամանակագրական հաղորդումներն արդեն հիմնովին հերքված են[3], կարևոր է պարզել այս ճակատամարտի իրական ժամանակը: Այն պետք է տեղի ունեցած լինի ոչ թե 1724 թ. մարտի 6-ին, այլ ապրիլի 25-ից՝ Կարբիի պաշարման սկսվելու պահից, ընդամենը մի քանի օր ավելի շուտ: Սա հետևում է և՛ Երևանի պաշարումը միայն հունիսի վերջին սկսելու հանգամանքից, և՛ հարձակման թափը չկորցնելու օսմանցիների ռազմական տրամաբանությունից, որով պարտադիր էր համարվելու անմիջապես պաշարել դիմադրության անսպասելի ցանկություն դրսևորած մոտակայքի հայաբնակ խոշոր գյուղաքաղաքը՝ Կարբին[4]:

[1] Այդ վերաբերմունքի դրսևորումների մասին մանրամասն տե՛ս **Armen M. Aivazian**, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997).

[2] **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթութիւններ, պատրաստեց Սահակ Ճեմճեմյան. Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 23-24:

[3] **Տե՛ս Ա. Մ. Այվազյան**, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, ՊԲՀ, 1991, № 1, էջ 94-95:

[4] Կարբին Չուխուր-Սա'դի վիլայեթի ամենահարուստ մահալն էր (տե՛ս **Հ. Փափազյան**, «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ-ԺԷ դդ.), էջ 38, А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII вв., Ереван, 1972, с. 114-151:

Այն, որ այս ճակատամարտը տեղի է ունեցել 1724 թ. մարտի 6-ից շատ ավելի ուշ, հուշում է նաև մարտի 13-ին Ս. Էջմիածնից Ղարաբաղի հայոց Սղնախների հրամանատարությանը (Ավան, Թարխան և Միրզա յուզբաշիներին) կաթողիկոսի «աթոռական Յովասափ վարդապետի» գրած նամակը, որում այդ դեպքերի մասին որևէ տեղեկություն չկա[1]: Եթե Եղվարդի ճակատամարտում Երևանի խանի զորքի խայտառակ պարտությունը, փախուստն ու Երևանի բերդում փակվելն իսկապես մարտի 6-ին եղած լինեին, ապա Ս. Էջմիածնի անմիջական շրջակայքի ռազմաքաղաքական վիճակը կտրուկ փոփոխած այդ իրադարձությունը նամակում որևէ կերպ կարտացոլվեր և այդ նամակն էլ այլևս հազիվ թե առաքվեր: Այնինչ նամակում ասվում է, թե «քանի որ [=քանի դեռ] թշնամեաց ձեռն չեմք մատնվել, գերի և աւար չեն հարկաներ» ու «որքան որ թշնամեաց ձեռն տեղս չէ հասել»՝ ռուսական զորքերը պետք է շուտ մտնեն Արարատյան երկիր՝ «շուտով գայցեն»[2]: Այսպիսի տողերը չէին գրվի, եթե օսմանյան զորքն արդեն Եղվարդում լիներ՝ Ս. Էջմիածնից մի քանի ժամվա հեռավորության վրա:

Հովասափ աթոռակալի 1724 թ. մարտի 13-ի նամակն առանձին քննության է արժանի մի քանի առումով: Նախ, ինչու՞ է այն ստորագրել ոչ թե Աստվածատուր կաթողիկոսը, այլ նրա աթոռակալը: Այս հարցին երկու պատասխան կարելի է տալ. ա) Աստվածատուր կաթողիկոսն այդ ընթացքում բացակայել է իր նստավայրից. գիտենք, որ 1723 թ., ինչպես նաև 1724 թ. առաջին կեսին նա եղել է Վրաստանում (մասնավորապես Կախեթում), ապա որոշ ժամանակ գտնվել է Թահմասպ Բ շահի մոտ՝ Նախիջևանում[3], ուստի նամակն էլ գրվել է նրա բացակայության

[1] *Армяно-русские отношения в первой трети XVIII века.* Сборник документов. Том II, часть II. Под редакцией Ашота Иоаннисяна. Ереван: изд. АН АССР, 1967 (այսուհետև՝ АРО, II), док. 228.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 86:

[3] **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, էջ 24, 31. հմմտ. 1726 թ. Կեսարիայում Ղազար Ջահկեցու գրած հիշատակարանի՝ 1724 թ. իրադարձությունների մասին հետևյալ հաղորդումը. «...կաթողիկոս տէր Աստուածատուր բազմաչարչար եւ սրբազան Հայրապետն ամենայն Հայոց, որ ի Գահն Սրբոյն Էջմիածնի... հալածանօք հանդերձ վտարանդի շրջելով ողբօք եւ արտասուօք, միջաբեկիւ եւ անմխիթարաւ սգով՝ երբեմն ի տունն Վրաց, եւ երբեմն ի տունն Նախչուանայ: Եւ անտի դարձեալ գա ի սեպհական յԱթոռն իւր ի Սուրբ Էջմիածին, սուգ առնելով ի վերայ տանն Հայոց եւ ի վերայ գիշատեալ եւ ճապաղեալ, խոցեալ եւ վիրաւորեալ գառանցն իւրոց անմեղաց, որպէս

պահին. բ) Հովասափ աթոռակալը ստորագրել է նամակը՝ Աստվածատուր կաթողիկոսի անվտանգությունն ապահովագրելու նպատակով:

Առավել հետաքրքիր է մեկ այլ խնդիր. ըստ նամակագրի, Երևանի պարսից իշխանությունները (նամակում այլաբանորեն անվանված են «նրանք») իբր նույնպես ռուսներին ընդունելու ցանկություն են հայտնել.

«Ապա հասարակ թէ մեր (իմա հայերի- Ա.Ա.), թէ սոցա ակնկալութիւն առ [հ]ուսուսայինն է, նորայ գալըստեանն և ճանապարհին են սպասում, դապուլ են (=ընդունելի են համարում) հիւսիսայնոյ գալստեանն, այլոց նման չեն համարում (այսինքն՝ պարսից մյուս իշխանավորների պես չեն մտածում՝ Ա.Ա.)...

Եւ դարձեալ տեղոյս մեծամեծ աղայնոց խորհուրդն հարցանէք, միտքն և խորհուրդն և դիտավորութիւն առ հիւսիսայինքն են, միշտ կուսպասեն դոցա գալստեանն, այլ ամենեցուն հետ մասն և խորհուրդ ոչ ունին»[1]:

Նամակում եղած ռուսերեն ծանոթագրությունից («помета»-յից) պարզ է, որ խոսքը վերաբերում է Երևանի պարսից իշխանություններին՝ «и что они и с персиянами в согласии»: Ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Աշ. Հովհաննիսյանը, այս նամակում այլաբանությունների գործածումը բացատրվում է նամակագրի մտավախությամբ, որ այն կարող է ընկնել թուրքերի ձեռքը[2]: Ուշադիր ընթերցելով մեկ այլ փաստաթուղթ՝ 1724 թ. ապրիլի 4-ին Արցախից Իվան Կարապետի ռուսաց հրամանատարությանը հղած զեկուցագիրը, եզրակացնում ենք, որ նրանում, Հովասափ աթոռակալի նամակի համառոտ վերաշարադրանքին զուգընթաց, առկա են նաև այն Արցախ հասցրած սուրհանդակի՝ Վարդան «փայեակի»[3] բանավոր հաղորդած տեղեկությունները, որոնք մա-

Երեմիաս՝ ի վերայ հնոյն Իսրայէլի: Քանզի հովիւս քաջ արիական յոժարութեամբ զանձն իւր եդ ի վերայ բանաւոր ոչխարացն Քրիստոսի, կամէր մատնիլ զանձն իւր ի գանս եւ ի բանտս, ի թուքս եւ ի յայտակս, ի վիշտս եւ ի նեղութիւնս, ի չարչարանս եւ ի մահս՝ վասն փրկութեան եւ ազատութեան ազգին իւրոյ եւ Աթոռոյն» (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 2121, էջ 369ա. **Արմեն Այվազյան**, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում: Երևան, Մատենադարան, «Լուսակն», 2003, էջ 266): «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, §113, էջ 200:

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Том II, часть I. Под редакцией Ашота Иоаннисяна. Ереван: изд. АН АССР, 1964 (այսուհետև՝ АРО, I), с. LXXVII.

[3] АРО, II, с. 86:

սամբ այսպես է վերապատմում Իվան Կարապետը.

«Եւ Երեվանոյ խանն և մեծայմեծկն լսել ան, որ եւ եգել ամ թագայորին ուքազովն էս Խայերին սղնաղն: Եւ գնացել ան էջմիածնայ կաթողիկոսին կուշտըն, թէ «էտ ըղո՞ր այ, որ Ըռուստրցն ուքազ է եգել Խայերին»: Եւ նոքայ ասացեալ էն, թէ «Լսել անք»: Եւ խանն ասացել այ պատրիարգին, թէ «Մեք կուվախենք քուրտէվար (իմա՝ պարսկերենով կամ թուրքերենով- Ա.Ա.) գիր գրենք, չլնի թէ ուրիշին ձեռն անկանի, դու հայէվար գրիր, տես, թէ ըղո՞ր այ, որ Ռուստ այ եգել, մեք էլ Ըռուստին թափի կուլնինք»: Եւ Ա (1) գիր ին գրել, աղարգել[1]:

Երևանի հայության և պարսկական (շիա մահմեդական) իշխանության միջև ռուսամետ դաշնության մասին նման տեղեկություններն աննախադեպ են թե՛ նախորդող, թե՛ հաջորդող ժամանակաշրջանների համար:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Երևանի պարսից իշխանությունները, մի կողմից քաջատեղյակ լինելով իրենց վրա օսմանյան մեծ զորաբանակի մոտալուտ հարձակմանը և, մյուս կողմից, այլես պարսկական ուժերից (մասնավորապես, Իրանի հյուսիսայի՛ն շրջաններում դեգերող Թահմասպ շահից) օգնություն ստանալու հույս չունենալով, իսկապես որոշել էին ընդունել ռուսական հովանավորությունը:

Սակայն, ինչպես ստորև ցույց կտանք, Երևանի խանի իրական նպատակներն ընդհանուր որևէ եզր չունեին «ռուսական կողմնորոշման» հետ: Նրա սկսած «ռուսական կողմնորոշման» սիրախաղը իսկական դրդապատճառն այլ էր՝ ներգրավել հայերին Արարատյան երկրի և, հատկապես, Երևանի պաշտպանության մեջ՝ ընդդեմ օսմանցիների: Պարզ է, որ ռուսների գալուստը տենչացող հայերը սիրով կմիանային Երևանի պաշտպանությանը, եթե այն հույսն ունենային, որ այստեղ իրենց իշխելու են ոչ թե պարսիկները կամ օսմանցի թուրքերը, այլ շուտով օգնության հասնող քրիստոնյա ռուսները[2] կամ հենց 60,000-անոց զինվորություն գումարած՝ Արցախում և Սյունիքում կենտրոնացած հայկական զորագնդերը: Ահա թե ինչու էր Ս. Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականը՝ կաթողիկոսի փոխանորդը, հաստեցագրում իր նամակը ո՛չ թե Ղարաբաղի հոգևոր տիրոջը՝ Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսին, որ միանգամայն տեղին կդիտվեր, այլ ուղղակիորեն հայկական զորքի, ըստ երևույթին, այդ

[1] АРО, II, док. 239, с. 99.

[2] Հմմտ. АРО, I, с. LXXVI.

պահին արդեն առասպելացված հրամանատարությանը՝ «բեր ճապատիւ և ազնուաբարոյ, յոգնահանճար և գերազնիւ, քրիստոսասէր և Աստուծով զօրացեալ, ազնուամեծար և պայեազատք պարոնաց պարոնք և իշխանաշուք իշխանացադ գլուխ կարգեալ ուզբաշոնցդ՝ պարոն Աւան բէկ ուզբաշուդ, և պարոն Թարխան ուզբաշուդ, պարոն Միրզա ուզբաշուդ և [հայոց զինվորականության] այլ մեծամեծաց և փոքունցդ»: Ընդ որում, նամակից կռահելի է Ս. Էջմիածնի հնուց եկող գաղտնի կապը հայոց զինյալ ազատագրական շարժման պարագլուխների հետ[1]:

Օսմանցիներին ցույց տված կատաղի դիմադրությունը կարելի է բացատրել միայն հայերի՝ մահմեդական լծից մեկընդմիշտ ազատագրվելու հույսով ու նպատակով: Հայոց համառ դիմադրությունը Կարբիում գաղտնիք էր մնացել անգամ օսմանցիների գլխավոր հրամանատարի համար, որը զարմացած բացականչել է. «Դուք ըռայեց էք, ինչո՞ւ համար էք կռիվ անում»: Նրա այս հարցի բովանդակությունը ճիշտ է պարզաբանել Աբրահամ Երևանցու «Պատմությունը» խմբագրած Մխիթարյան միաբան Մատթեոս Եվդոկիացի Գարագաշյանը (1691-1772)՝ «Դուք ի սկզբանէ ի վաղ ժամանակաց հետէ հպատակք էիք, եւ այժմ ընդէ՞ր ամբառնայք ընդվզիլ. զի՞ կայ ձեր զինվորիլ վասն երկրիս, որոյ տէրութիւնն ոչ է ձեր...»[2]:

16-18-րդ դարերում Երևանի ռազմավարական նշանակությունը չափազանց բարձր էր գնահատվում, մասնավորապես, հայ գործիչները Երևանի վրա վերահսկողություն հաստատելու խնդիրը կարևորում էին ազատության դրոշը պարզելուն պես՝ 1722 թվականից ի վեր: Այսպես, Հաղբաթի և Թիֆլիսի հայոց միացյալ մեծ վիճակի առաջնորդ Մինաս Փերվազյանը (1680-1757)[3], որն անձամբ կապված էր հայ և վրաց զինվորականության պարագլուխների հետ, 1722 թ. դեկտեմբերի 22-ին Թիֆլիսից գրում էր Ռուսաստանում հայ ազատագրական շարժման վաղեմի ներկայացուցիչ Մինաս Տիգրանյանին (1658-1740).

«Թէ ասես, ինչպէս Օսմանլուն կուշարժի, Աստուած մի արասցէ զԵրևանու երկիրն զապթ կանէ [=զավթի], վերջն նեղութիւնն շատ

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**,Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, էջ 9-16, 29-40:

[2] **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, էջ 24, 97:

[3] Մինաս արքեպսկ. Փերվազյանն այդ պահին նաև՝ «Աթոռակալ Սուրբ Յէջմիածնի» էր, նրա մասին տե՛ս **Ա. Այվազյան**,Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, էջ 12, 23, 25-26, 43, 45, 58, 83, 223-224:

կրեմք... հազիւ Գ, Դ (3-4) տեղ գլուխ են արել, միաբանել են նոցա գլուխն գլուխն և զմիաբանութիւնն կուցրվեն: Եւս յԵրևան Իրանու երկրին բանալիքն է. քեզ ևս զահիր է [=հայտնի է] մեր մաթլապն [=նպատակը], այս է, որ Երևան ձեռք բերեմք, այլ Օսմանլուն և խզըլպաշն ոչ ինչ կարել չեն պաշարում»[1]:

Արևելահայոց զինյալ ուժերը միավորելու ռազմավարական նույն այս ուշագրավ ծրագիրն ուներ նաև Ղարաբաղի հայոց Սղնախների հրամանատարությունը, ինչը հիշատակված է Իվան Կարապետի 1724 թ. ապրիլի 4-ին գրած՝ վերն այլ առիթով մեջբերված նամակում.

«Եւ էս Խայերին մէչտեղն Քուրդ [իմա՝ մահմեդական զինուժ՝ Ա.Ա.] կայ: Էս Խայերն ասում ան, թէ «Զատիկն առենք երեքշապաթ կամ չորէքշապաթ օր (այսինքն՝ 1724 թ. ապրիլի 7-ին կամ 8-ին) կուգնանք Քուրտին վերէն. քուրտն փչացնէնք, որ տեղէս մինչ ի Երևան ողջ Խայեր ան, Ա (1) կուտառնան»»[2]:

Ցույց ենք տվել, որ արցախցիներն 1724 թ. ապրիլի 9-ին և 15-ին իրոք արշավում են, սակայն, ցավոք, ո՛չ Երևան հասնելու վճռականությամբ, այլ ընդամենը Սյունիքում գերլարումով կռվող Դավիթ-բեկի ուժերին (նրանց կրած մի լուրջ պարտությունից հետո) օժանդակելու սահմանափակ ծրագրով[3]: Նկատել ենք նաև, որ հայոց ապստամբության ղեկավարությունն ամենևին էլ հեռու չէր հայկական միասնական ազատագրական ճակատի ստեղծման գաղափարից,

[1] Նույն նամակի ռուսերեն թարգմանության մեջ ասված է. "ежели турки подымутся и Эриван возьмут, то в то время превеликая будет трудность... мы все пропадем... и тебе известно, что Эриван яко замок Персицкой земле, и наше намерение токмо, чтоб нам взять Эриван, а как оной в наши руки достанется, тогда ни турки, ни персияне ничего нам сделать не могут" (АРО, II, док. 169, 170, с. 19, 20-21. հմմտ. док. 165, 242, с. 9, 12, 13, 103, որտեղ կան Երևանի ռազմավարական նշանակության մասին նույնատիպ գնահատականներ՝ տրված ռուս հրամանատարի, Քարթլիի թագավոր Վախթանգ Զ-ի և Իվան Կարապետի կողմից): Ավելի վաղ նույն բանը Պետրոս Մեծին տեղեկացրել էր Իսրայել Օրին (**Г. А. Эзов**, Сношения Петра Великого с Армянским народом. Документы. С. Петербург: Тип. Имп. Академии Наук, 1898, с. XXXVIII):

[2] **Ա. Մ. Այվազյան**, 1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ), ՊԲՀ, 1990, № 2 (129), էջ 131-132: Արցախցիների նախորդող՝ 1723 թ. նոյեմբերին ձեռնարկված օգնական արշավի անմիջական նպատակն էր Որոտնա բերդի գրավումը՝ տե՛ս **Նույնի**, Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, ՊԲՀ, 1990, № 4 (131), էջ 78:

[3] **Ա. Մ. Այվազյան**, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 109. տե՛ս նաև **Նույնի**, Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները, էջ 84-85:

ճակատ, որը, եթե չլիներ օսմանցիների նախահարձակ ներխուժումն Անդրկովկաս, հնարավորություն ուներ միավորելու իր մեջ Արևելյան Հայաստանի ազատագրական կենտրոնները՝ Արցախը, Սյունիքը, Երևանն ու Նախիջևանը[1]՝ միաժամանակ ձգտելով իր մեջ առնել Արևմտյան Հայաստանի՝ տակավին Իսրայել Օրու հիշատակած հայոց զինական ներուժը[2]:

Տեղին է նկատել նաև, որ արցախցիներն արտահայտում էին հայոց ռազմական ուժերը միավորելու այդ նպատակն օսմանյան զորքերի դեպի Երևան արշավելու ճիշտ նախօրեին, ընդ որում՝ Երևանի ուղղակի մատնանշումով, որից հետևում է, որ, բացի հայաստանյան միասնական ազատագրական ճակատ ստեղծելու վաղուց ի վեր խմորվող, իսկ 1722 թվականից սկսած հայոց կենտրոններում, անտարակույս, անընդհատ վիրաբերվող գաղափարից, այդ պահին նույն շրջանակներում քննարկման հրատապ առարկա էր դարձել հայկական զորքերով Երևանին օգնության հասնելու և հենց Երևանի պատերի տակ օսմանցիներին կանգնեցնելու՝ ռազմավարության տեսանկյունից միանգամայն ընդունելի, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, չիրագործված կամ գուցե անիրագործելի ծրագիրը:

Ամենայն հավանականությամբ, Երևանի հայ պաշտպանների, իսկ

[1] APO, II, док. 239, с. 99.

[2] Г. А. Эзов, Сношения Петра Великого с Армянским народом, док. 9, с. 36. Լեո, երևելի ժողովածու (տասը հատորով), Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2. Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 56-57. Արևմտահայերին հայոց ազատագրական շարժման մեջ ներգրավելու փորձերի մասին տե՛ս Armen Ayvazyan, The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722 (Concerning The Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement), in Janos M. Bak and Peter Banyo, eds., Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe (Budapest-Cambridge, MA: Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centers and Regional Associations of the Medieval Academy of America, 2001), pp. 59-68. տե՛ս նաև Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, էջ 132-134, 148-152, 299-301: Այս առումով մի լրացուցիչ հետաքրքրական տեղեկություն է հաղորդում Գիլանենցի լրատուներից մեկը՝ Մկրտիչ վարդապետը: Պարզվում է, որ տակավին 1722 թ. սեպտեմբերի առաջին կեսին Կարսի փաշան արգելում է օսմանահպատակ հայերին այցելել Ս. Էջմիածին, Աստվածատուր կաթողիկոսին մեղադրելով ռուսներին հրավիրելու մեջ («Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, §96, էջ 193): Հետևաբար, արդեն այդ ժամանակ հայ ազատագրական շարժումը և Ռուսաստանի հետ նրա կապը լայնորեն հայտնի էր դարձել Պարսկաստանին սահմանակից օսմանյան նահանգներում, առաջացնելով իշխանությունների մտավախությունը՝ արևմտահայերի նրանում ներգրավվելու մեջ:

դրանից առաջ Կարբիի պաշտպանների ունեցած ոչ նվազ քանակությամբ զենքն ու զինամթերքը մասամբ նրանց պետք է բաժանած լիներ Երևանի Ալի-կուլի խանը՝ նրանց հետ հակաօսմանյան դաշինք կնքելուց անմիջապես հետո: Հայերի հետ դաշնակցելու գաղափարն առաջացած պետք է լիներ 1723 թ. հոկտեմբերին Գանձակի մոտ օսմանյան բանակի դեմ հայ-վրաց-շիա միացյալ ուժերի արձանագրած հաջողությունից հետո, երբ Իբրահիմ փաշայի, ըստ տարբեր աղբյուրների, 40-ից 80 հազարանոց բանակը ջախջախիչ պարտություն կրեց ու նահանջեց Թիֆլիս[1]: 1723 թ. սկսված օսմանյան ներխուժումից հետո հայերի և շիա մահմեդականների միջև դաշինքն ուղղակիորեն խրախուսում էր նաև վտարանդի շահ Թահմասպ Բ-ը, բացառությամբ, երբ այն հակասում էր իր մահմեդական դաշնակից-հետևորդների շահերին[2]: Հիշենք նաև, որ նույն 1724 թ. մարտի 24-ին հակաօսմանյան փոխօգնության դաշինք կնքվեց Գանձակի և Արցախի հայերի միջև[3]: Այդ պայմանագրի էությունը հետևյալն էր.

«գանջեցոց վերէն թէ՛ Օսմանլուի, և թէ՛ Լակզոյ ղօշում [=զորք] գայ, մեր Հայոց ազգս՝ թամամ ի վերոյ գրեալքս, գնանք գանջեցոնց քմամակ [=օգնության], չուն Գանջայ էլ մեր թագավորին (իմա՝ Պետրոս Ա ռուսաց ցարին - Ա.Ա.) թաբէ [=հնազանդ] ան: Եւ թէ մեզ վերէն Օսմանլու կամ Լազգի գայ՝ գանջեցիք գան մեզ քմամակ: Եվ թէ մեր Հայոց ազգս գանջեցոց խաբենք, գնանք ոչ քոմակ, և թէ գանջեցոց խաբենք կամ գանջեցոց Ա (1) մարդի կամ շատ փոքր բռնենք կամ սպանենք, կամ թալանենք՝ մեր գլուխն և մեր ապրանքըն թագաւորին լինի»[4]:

Մոտավորապես նույն հիմունքներով էլ պետք է կազմված լիներ

[1] Ա. Այվազյան, Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, էջ 71-75:

[2] Այսպես՝ 1724 թ. գարնանը և ամառվա ամիսներին Թահմասպի վերաբերմունքը Դավիթ-բեկի իշխանապետության նկատմամբ փոփոխական էր՝ մեկ թշնամական, մեկ սիրալիր (տե՛ս Ա. Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 102-113): Մինչդեռ 1723 թ. ամառվա իրավիճակը նկարագրող մի փաստաթղթում մատնանշված է Թահմասպ Բ-ի դրական վերաբերմունքը դեպի Ղարաբաղի հայոց զորքը. "А сын шахов... пишет де ко армянскому войску з дружелюбием и повелевает ежели де сколько вашей мочи будет, то побейте лезгинцов Даудбеково войско, только де моего войска людей не трогайте" (APO, II, док. 188, с. 44):

[3] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից: Ուսումնասիրություն և վավերագրեր. Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953, էջ 96-109. APO, I, с. LXVI-LXXV; APO, II, док. 233-240, 242-246:

[4] APO, II, док. 233, с. 92.

Երևանի հայության և պարսկական իշխանությունների միջև համաձայնությունը, որի կնքման ժամանակը ևս կարելի որոշել: 1724 թ. ապրիլի 4-ի վերոհիշյալ նամակում Իվան Կարապետը նաև հայտնում էր Երևանի հայությանն ու պարսից իշխանություններին իր ավելի վաղ առաքած պատասխանի մասին. «...և ես Ա (1) գիր գրեցի Երևանոյ մեծ և փոքրին վերէն, թէ «խաթրիճամ կացէք [=վստահ եղեք], որ մեր թագայորի՛ն ձեզ շատ այ սիրում, բարի»[1]: Ահա այս գրության Երևան հասնելու պահից էլ պետք է ձևավորում ստանար Երևանի հայության և շահ իշխանությունների միջև գործնական դաշնությունը, այն է՝ 1724 թ. ապրիլի կեսերից մինչև Կարբիի պաշտպանության սկիզբը՝ ապրիլի 25-ը:

Պարզ է, որ Արարատյան երկրի հայությունը մոտ ապագայում ակնկալում էր տեսնել ռուսական հովանավորության տակ հայկական իշխանության վերահաստատումը կամ առնվազն քրիստոնյա Ռուսաստանի իշխանության հաստատումը (այդ ակնկալիքները վերազարթնել էին 1724 թ. սկզբին ռուսաց ցարի «էլչի»՝ դեսպան Իվան Կարապետի մեծ աղմուկ հանած Արցախ ժամանումից հետո) և դրան արժանանալու համար պատրաստ էր նաև արյամբ վճարել: Սակայն ո՞րն էր Երևանի խանի նպատակը, երբ այն ոչ միայն թույլ էր տալիս զինվել, այլև ինքն էր զինում քրիստոնյա ռայային, որը Ղարաբաղում, Ղափանում ու Նախիջևանում արդեն զենքով էր դրսևորել իր ազգային-ազատագրական նկրտումները, որոնց վտանգը մահմեդական իշխանության համար ակնհայտ էր: Հավատալ, որ Երևանի խանն իրոք պատրաստ էր սիրահոժարաբար «Ռուստին թապի» լինել, միամտություն կլիներ, որովհետև.

Ա) նկատի ունենալով քաղաքի ռազմավարական նշանակությունը՝ Երևանի խաները միշտ նշանակվել են պարսից շահերի ամենավստահելի շրջապատից և երբե՛ք, ամենածանր պայմաններում անգամ, ընդհուպ մինչև 1828 թ. ռուսների կողմից գրավվելը, Երևանը որևէ ուժի առանց կռվի չեն հանձնել: Այս առումով բացառություն չէր նաև Երևանի Ալի-կուլի խանը, որի նվիրվածությունը պարսից իշխանությանը և ատելությունը հայերի և հայ ազատագրական շարժման նկատմամբ վերը շարադրված փաստերից մեզ արդեն ծանոթ է: Շահ Թահմասպը Բ ևս որևէ մտադրություն չուներ հանձնելու Երևանը ռուսներին: Հիշենք, որ նա մերժեց անգամ մերձկասպյան շրջանների՝ ռուսներին հանձնելու Իսմայիլ-բեկի ստորագրած պայմանագիրը, «առարկելով, թե ինքը կարիք չէ զգում դրսի օգնության. եթե ռուսներն այդքան բարյացակամ և

[1] АРО, II, док. 239, с. 99.

հոգատար են դեպի իր ներքին գործերը, թող ազատեն Պարսկաստանն իրանց զորքերից և թույլ տան միայն իրան լինելու իր երկրի տերն ու տնօրենը»[1]:

Բ) շահ Թահմասպ Բ-ի՝ Երևանի Ալի-կուլի խան Ցիցիշվիլու նկատմամբ տածած վստահությունը երևում է թեկուզ նրանից, որ հե՛նց նրա եղբայր Մանսուր-խանն էր նշանակվել շահի զորքերի գլխավոր հրամանատար՝ «սիփահսալար» ու նաև Չուխուր-Սա'դի բեկլարբեկի, այնուհետև արշավի էր ելել պաշարված Երևանին օգնության հասնելու մտադրությամբ (այդ փորձը, սակայն, ձախողվեց. Մանսուր-խանի 8,000-անոց բանակը 1724 թ. օգոստոսի 27-ին Օրդուբադի մոտակայքում պարտության մատնվեց, ինքն էլ քիչ ժամանակ անց՝ տակավին Երևանի պաշարման միջոցին, «Արաքսի մոտ» գերի ընկավ օսմանցիներին)[2].

Գ) 1724 թ. սկզբի դրությամբ Երևանի ռազմավարական մեծ նշանակությունը Թահմասպ Բ-ի համար է՛լ ավելի էր կարևորվում, քանզի նրա ենթակայությունից արդեն իսկ դուրս էին մնացել Իրանի կենտրոնական և արևելյան շրջանները: Կորցնելով Երևանը՝ նա զրկվելու էր Անդրկովկասում իր իշխանության ու հեղինակության վերջին մնացորդներից, վտանգելով նաև իր հիմնական ապաստարանը՝ Թավրիզն ու Արդեբիլը: Հե՛նց Երևանի պաշտպանությունը հնարավորին չափ մոտից կազմակերպելու նպատակով 1723 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1724 թ. փետրվար ամիսը Թահմասպն անցկացրեց սահմանակից Նախիջևանում՝ փորձելով հրով ու սրով ստեղծել իր ուզած կարգ ու կանոնը: Թահմասպի ու Նախիջևանի խանի (ի դեպ, Դավիթ-բեկի ոխերիմ թշնամու) զանգվածային կեղեքումների և դաժան ճնշումների քաղաքականությունը Նախիջևանի նահանգի հայերի նկատմամբ տվեց անսպասելի արդյունք՝ 1724 թ. օգոստոսին նախիջևանահայությունը, միանալով օսմանյան զորագնդերին, զենքն ուղղեց պարսկական ուժերի դեմ[3]:

[1] **Աշոտ Յովհաննիսեան**, Պետրոս դի Սարգիս Գիլանէնց. Ս. էջմիածին, 1916, էջ 16. հմմտ. **L. Lockhart**, The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia, pp. 245-248:

[2] **Ա. Մ. Այվազյան**, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 104-106. հմմտ. Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արամյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978, էջ 129-130. **Միքայէլ Չամչեանց**. Պատմութիւն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 790. **Jonas Hanway**, An Historical Account of the British Trade over the Caspian Sea. 2nd ed., Volume II, London, 1754, pp. 212-213:

[3] Տե՛ս **Ա. Մ. Այվազյան**, Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, էջ 77, ծնթ. 53. **Նույնի**՝ Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 109-113, մասնավորապես՝ էջ 112, ծնթ. 34:

Այսպիսի պարագաներում Երևանի խանի՝ հայերին զորք կազմելու թույլտվություն տալը, նրանց զենք ու զինամթերք մատակարարելը ռուսական հովանավորություն ընդունելու պատրաստակամության հետ որևէ առնչություն ունենալ չէին կարող: Պարզ է, որ ռուսների՝ Երևանին մոտենալու դեպքում 10,000-անոց կազմակերպված հայկական զինուժը ռուսների օգնությամբ վերջակետ էր դնելու Արարատյան երկրում պարսկական իշխանությանը: Եզրակացությունը միակն է. մի կողմից՝ Երևանի խանը չի հավատացել ռուսների՝ Մերձկասպյան շրջաններից առաջխաղացման հնարավորությանը, գուցե լավատեղյակ լինելով ռուս-թուրքական շուտով կնքվելիք պայմանագրի դրույթներին (1724 թ. հունիսի 12, Կ. Պոլիս), մյուս կողմից՝ նա հավատարիմ է մնացել պարսից իշխանությանը: Թե այդ հավատարմությունն ինչի՞ց էր բխում՝ զինվորական պատվո վարքականոնի՞ց, շիա մոլեռանդությունի՞ց, թե՞ իրեն հանձնված բարձր պաշտոնը պահպանելու և վայելելու ցանկությունից՝ այժմ դժվար է ճշտել ու, վերջին հաշվով, մեր հետազոտության համար սկզբունքային նշանակություն չունի:

Հրաշալիորեն գիտակցելով հայերի տրամադրությունները, Երևանի Ալի-կուլի խանը փորձել և մեծավ մասամբ հաջողել է լուծել երկու խնդիր. ա) հայերի օգնությամբ դիմադրել օսմանցիներին և պաշտպանել Երևանը որքան հնարավոր է երկար (իրականում, նա հույս ուներ օգնություն ստանալ իր եղբոր հրամանատարությամբ դեպի Երևան շարժվող պարսկական ուժերից), և բ) արնաքամ անել Արարատյան երկրի հայությունը, որն, ըստ ամենայնի, ազատագրական պայքարի համար նախապատրաստական որոշ աշխատանքներ վաղուց էր ձեռնարկել ու հարմար առիթի դեպքում ունակ էր ապստամբելու և միանալու Արցախում և Սյունիքում կենտրոնացած հայոց զինուժին: Արարատյան երկրի հայության ապստամբական նախապատրաստումների թվին կարելի է դասել Երևանի և շրջակա հայկական գյուղերի բնակչության ձեռքին զգալի քանակությամբ զենքի և զինամթերքի առկայությունն ու բավականին լավ կազմակերպվածությունը, որոնք միայն Երևանի խանի՝ վերջին պահին տրամադրած աջակցության արդյունքը լինել չէին կարող:

Նշվեց, որ 1723 թ. Երևանի խանը հայերի նկատմամբ որդեգրում և իրականացնում է ճնշումների ու կեղեքումների քաղաքականություն, որը որոշ տեղեկությունների պնդմամբ հաջողվում է կասեցնել Թահմասպի ամենամտերիմ զորավարներից մեկի՝ թիֆլիսահայ Փարսադան-բեկի մի ջամտության շնորհիվ (ի դեպ, վերջինս Դավիթ-բեկի աներն

էր)[1]: 1724 թ. սկզբի դրությամբ, սակայն, Երևանի խանը հիմնովին վերանայում է հայերի նկատմամբ իր թշնամական դիրքորոշումը՝ աչքի առջև ունենալով, հայերի ստվարաթիվությունն ու դիմադրական մեծ ներուժը[2], օսմանյան ներխուժման նախօրեին հայ-պարսկական գժտվածության ծայրահեղ վտանգավորությունը, ինչպես նաև Հայոց Սղնախներից դեռևս 1723 թ. գարնան վերջին հնչած հետևյալ նախազգուշացումը.

«մենք ուզում ինք գինք ձեզ վերայե չումքի մեր կաթուղիկոսն մեզ գրել էր՝ թէ «սոքա մեզ բարեկամ անե սոցա դէքմիշ չնէք [=չդիպչեք] և դէս չգէք»ե մեր կաթուղիկոսին խաթեր խամար էլ եկինք ոչե յետ դառցանք: Չուն որ մենք էս մարդայորութիւնն արարինքե պիտի որ դուք էլ մեր կաթուղիկոսին և իւր թամամ վանքէրին և միայբանոցն և տեղիտ խայէրին ջաֆայ չառէք՝ լեվ աղաթօվ պախէք»[3]:

Ուշագրավ է, որ թիկունքում խաղաղություն ապահովելու և հայերին օսմանցիների դեմ օգտագործելու նոր քաղաքականությունն այդ նույն միջոցին որդեգրում է նաև Երևանի Ալի-կուլի խանի եղբայր Մանսուր-խանը, մինչդեռ դրան նախորդած Թահմասպի բռնամիջոցներն օտար սկզբնաղբյուրներում գնահատվում են իբրև չափազանց «անմտածված»[4]:

Երևանի Ալի-կուլի խանն իր իսկական դեմքն ու նպատակները ցույց տվեց երկիցս: Առաջին դեպքը վերաբերում է Կարբի գյուղաքաղաքի ինքնապաշտպանությանը: 1724 թ. ապրիլին՝ Եղվարդի ճակատամարտից անմիջապես հետո, Կարբի հայկական գյուղաքաղաքը որոշում

---

[1] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», № 3, §133, էջ 208-209. տե՛ս նաև **A. Aivazian**, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, pp. 14-15 and notes 48-54.

[2] 1722 թ. դեկտեմբերի սկզբին, մի առիթով Երևանի հայության ստվարաթիվությունը ռուսների պատվիրակ Ի. Տոլստոյին մատնացույց է անում նաև Վախթանգ Զ-ը. "...и ежели упредят приходом своим турки и возьмут Ереван, тогда завладеют многими армянами..." (տե՛ս **Г. Г. Пайчадзе**, Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в., с. 53-54, АРО, II, док. 165, с. 13):

[3] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». - «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, № 3, էջ 197. այս նամակագրության մասին մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**,Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, էջ 33-36:

[4] **Ա. Այվազյան**, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 102-109, 112:

է դիմադրել օսմանցիներին: Անհավանական է, որ կարբեցիները նման քայլի դիմեին՝ չունենալով Երևանի խանից՝ այդ պահին միակ հնարավոր զինական դաշնակից ուժից, օգնության գալու հստակ հավաստիացումներ: Այս մասին են հուշում նաև Աբրահամ Երևանցու տեղեկությունները. օսմանցիների մոտենալուն պես կարբեցիները, ինքնապաշտպանություն կազմակերպելով և առաջին բախումների մեջ մտնելով, դիմում են Երևանի խանին (որն, ինչպես վերը նշվեց, սխալմամբ անվանված է Միհրալի-խան) հետևյալ խնդրանքով.

««Օսմանցին եկել այ, մեր գեղն պատել այ, մին փորքն հզօր ղրկայ մեզ, որ մենք կռիվ անենք օսմանցուն հետ»: Երեւանայ խանըն ղրկեց ոչ»[1]:

Այստեղից կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե խանը միանշանակ մերժում է փոխանցել կարբեցի բանագնացներին, սակայն Կարբիի դիմադրության շարունակումը, անգամ սերասկյար Արիֆի-Ահմեդ փաշայի հրամանատարությամբ օսմանյան հիմնական ուժերի ժամանումից հետո, և, հատկապես, Երևանի խանի մոտ կարբեցիների երկրորդ բանագնացությունը, ցույց են տալիս, որ վերջինս սկզբում խոստացել էր ռազմական օգնություն ցույց տալ: Ավելի ուշ միայն, երբ կարբեցիներն արդեն հանդգնությունն էին ունեցել դիմադրելու օսմանցիներին, Երևանի խանը նրանց արդեն բացեիբաց մերժել էր, առաջարկելով նոր՝ սին բացատրություն, թե՝ «կռիվ արէք, մինչեւ Աստուածատուր կաթիղիկոսն գնացել այ շահ Թամազին մոտ, տեսնեն ինչ խաբար կայ», և նույնիսկ հրաժարվել էր զինամթերքով օժանդակելուց՝ «ղաբուլ չարավ, թէ բարութ կը ղըրկեմ, ղումբարայ կը ղըրկեմ»[2]:

Ալի-կուլի խանի կարծիքով, ինքն իր նպատակին հասել էր: Նախ, Կարբիի ինքնապաշտպանության շնորհիվ հաջողվել էր կասեցնել ու հետաձգել օսմանյան բանակի՝ Երևանի վրա արշավանքը, որով խանը թանկարժեք ժամանակ էր շահում և հնարավորություն տալիս Թահմասպին կազմակերպել իր եղբոր գլխավորությամբ օժանդակ ուժերի առաքումը: Իսկ ինչ վերաբերում է կարբեցիներին, նրանց ճակատագիրն իրեն ամենևին չէր հետաքրքրում. շարունակեին նրանք դիմադրությունը թե ոչ, երկու դեպքում էլ, Ալի-կուլի խանի կարծիքով, նրանց բախտը որոշված էր՝ հայերի հանդգնությունից կատաղած, օսմանցիները, համաձայն իրենց նվաճողական ավանդույթին ու ռազմական սովորությանը, ոչնչացնելու և գերեվարելու էին դիմադրություն ցույց տված 6,000-անոց զինավառ գյուղաքաղաքը[3], որը, որպես հայ ազատագրական շարժման հնարավոր կենտրոն, ոչ պակաս վտանգ էր ներկայացնում նաև պարսկական իշխանության համար: Մխիթարյան Մատթեոս Գարագաշյանը ճիշտ է նկատել Երևանի խանի այս ուղղությունը, համարելով, որ նա «ի սպանդ էր վարում» կարբեցիներին.

«Ի կորուստ անձանց նոցա վարէր զնոսա թշուառականն, զի էր օտարազգի եւ անհաւատ, եւ ոչ ինչ փոյթ էր նմա գերութիւն եւ կոտորումն քրիստոնեայ ազգին մերոյ: Վասնզի եթէ հարազատ հաւատարիմ խնամածու իցէր, զիարդ մարթ էր նմա զնոսա այսպէս իբրեւ զոչխար ի սպանդ վարել. քանզի զի՞նչ համեմատութիւն էր անպարիսպ, անխրամ և անզօր գիւղաքաղաքի միոյ առ այնչափ բազմութիւն զօրացն, որք պաշարեցին զնա. թէպէտեւ էին ի նմա բազումք, որք կարէին զինուորիլ»[1]:

Այս հանգամանքներում, սակայն, Արիֆի-Ահմեդ փաշան, անշուշտ, լավատեղյակ լինելով Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում հայերի զինավառության մասին, խոհեմություն ցուցաբերեց և բանակցությունների միջոցով հասավ Կարբիի պատվավոր հանձնմանն ու զինաթափությանը[2]: Թուրքերի դրսևորած այսպիսի եզակի մեղմությունն ընդամենը մի քանի ամիս անց փոխհատուցեց նրանց, մասնավորապես, Նախիջևանում հայերի հնազանդություն հայտնելով ու զենքը պարսկական իշխանության դեմ ուղղելով:

Երկրորդ դեպքը կապված է արդեն բուն Երևանի պաշարման հետ, երբ քաղաքի վրա ձեռնարկված օսմանյան ամենակատաղի գրոհներից մեկի ժամանակ՝ օգոստոսի 14-ին, Ալի-կուլի խանն անսպասելիորեն իր մոտ՝ Երևանի բերդ հետ կանչեց մինչ այդ Ջորագյուղում և Կոնդում հայերի հետ միասին պաշտպանությանը մասնակցող մահմեդական ուժերը, այդպիսով, մի կողմից՝ կորստյան մատնելով ազատագրական հույսերով տարված հայերին, մյուս կողմից՝ ուժեղացնելով բերդի կայազորը և իր համար հետագայում ապահովելով պատվավոր պայմաններով բերդի հանձնումը (նրան թույլ տրվեց իր շքախմբով հեռանալ Թահմասպ շահի մոտ): Իր զորքը բերդ հետկանչելով, Ալի-կուլի խանը դրժել էր Երևանի հայերին տված իր խոստումները, վերջիններս էլ, նրանից հույսը կտրելով, օսմանցիների հետ առանձին բանակցելու ուշացած փորձեր արեցին, սակայն՝ ապարդյուն[3]: Քաղաքի դիմադրու-

[1] **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, էջ 24:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 25, 99:

[1] **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, էջ 98:
[2] **Նույն տեղում**, էջ 24-25, 98-99:
[3] **Նույն տեղում**, էջ 30-31:

թյունը կոտրելով, թուրքերը կոտորեցին 30,000 հայ բնակիչներին, իսկ մնացածներին քշեցին գերության[1]: Այսպիսով, Երևանի հայությունը ոչնչացվեց՝ զոհ գնալով օսմանյան գերակշիռ ուժերի վայրագ հարձակմանն ու պարսկական իշխանության բացահայտ դավաճանությանը:

Ամփոփենք վերը կատարված քննության հիմնական արդյունքները: Մինչև 1717 թ. Երևանի խան, անհայտ տևողությամբ, եղել է ոմն Միրզա Մահմուդ բեյը: 1718-1724 թթ. Երևանում իբրև խան պաշտոնավարել է շիա ուղղության մահմեդականություն ընդունած Ալի-կուլի (Ալլահ-կուլի) խանը՝ վրացի Ցիցիշվիլիների տոհմից: Սակայն նրա պաշտոնավարության օրոք՝ 1722-1724 թթ., Երևանի խան (Չուխուր Սա'դի բեկլարբեկի) են եղել ծագումով վրացի երկու այլ հավատափոխներ ևս. Մուհամմադ-կուլի խանը (նույն ինքը Կախեթի թագավոր Կոնստանտինը)՝ մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև 1724 թ. առաջին կեսը, և Ալի-կուլիի եղբայր սիփահսալար Մանսուր-խանը՝ ամենաուշը 1724 թ. հուլիս-օգոստոսին: Այս երկուսն էլ ֆիզիկապես գտնվել են ու գործել Երևանից դուրս: Մուհամմադ-կուլի խանը նշանակել է Ալի-կուլիին իր փոխանորդի՝ «նայիբ»-ի պաշտոնում մոտավորապես 1722 թ. մայիսից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած միջոցին: Ալի-կուլի խանը, հետևելով շահ Թահմասպի Բ-ին, 1722-1723 թթ. հայության դեմ իրականացրել է դաժան բռնամիջոցների քաղաքականություն: 1724 թ. սկզբին, սակայն, օսմանյան ներխուժմանը հակազդելու անհրաժեշտությունից դրդված հայերի նկատմամբ նրա վերաբերմունքը առերեսորեն փոխվել է և 1724 թ. ապրիլի երկրորդ կեսին Երևանի հայության և շիա իշխանության միջև հակաօսմանյան դաշնություն է կնքվել, սակայն ընդամենը հայերին օգտագործելու, ապա Կարբիի ու Երևանի ինքնապաշտպանությունների ժամանակ դավաճանաբար լքելու վերջնական արդյունքով:

Աբրահամ Երևանցին սխալվել է ինչպես օսմանյան բանակի գլխավոր հրամանատարի, այնպես էլ Երևանի խանի ինքնության հարցում. առաջինն Արիֆի-Ահմեդն էր (ոչ Աբդուլլա փաշան)[2], երկրորդը՝

[1] Երևանում կոտորված 30,000 հայերի մասին հաղորդում է այդ դեպքերին բավականին մոտից հետևած լեհ ճիզվիտ Ջ. Կրուշինսկին, որը մինչև 1725 թ. հունիսը գտնվում էր Սպահանում (տե՛ս **[Judasz Tadeusz] Krusinski**, The History of the Late Revolutions of Persia. Vol. II, 2nd edn. London, 1740. reprinted in 1973, New York:ARNO Press, p. 178: Այս տեղեկությունը համընկնում է Աբրահամ Երևանցու այն հաղորդմանը, ըստ որի Ջորագյուղ-Կոնդում, բացի 10000 հայ զինյալներից, կենտրոնացել էին 28,000 զենք կրելուն «անպէտ» հայ խաղաղ բնակիչներ (տե՛ս **Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, էջ 28):

[2] **Մ. Այվազյան**, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, էջ 94, ծնթ. 11:

Ալի-կուլի խանն էր (ոչ Մեհր-Ալի/Միհրալի խանը, ինչպես նշվում է նրա «Պատմության» մեջ): Աբրահամ Երևանցու այս սխալները վկայում են, որ նա անձամբ 1724 թ. դեպքերի ականատեսը չի եղել, այլ քաղել է իր տեղեկությունները տարբեր աղբյուրներից, ավելի ստույգ՝ տարբեր լրատուներից: Հետևաբար, Աբրահամ Երևանցին բացակայել է Երևանից ոչ միայն 1724 թ., այլև առնվազն այն ամբողջ ժամանակահատվածում, երբ ավարտվել էր Մեհր-Ալի խանի պաշտոնավարությունը, այսինքն՝ ամենաուշը 1716 թ. սկսած: